

ՀԱՅԵՐԵՆ ԵՐԳԱՐԱՆՆԵՐԻ  
ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

(1513-1921 թթ.)



«ՍԱՅԱԹ-ՆՈՎԱ» ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ԸԱՅԵՐԵՆ ԵՐԳԱՐԱՆՆԵՐԻ  
ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ  
(1513-1921թթ.)

Աշխատասիրությամբ ԿԱՐԻՆԵ ԶԱՐՈՅԱՆԻ

ԵՐԵՎԱՆ



2014

ՀՏԴ 01:78  
ԳՄԴ 91+85.31  
Հ 249

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի  
գիտական խորհրդի որոշմամբ

Գրքի հրատարակության հովանավորն է  
**ՍԱՄՎԵԼ ՖՐՈՒՆԶԵԻ ՍԱՐԳՍՅԱՆԸ**

Խմբագիր՝ Թովմաս Պողոսյան  
Խորհրդատու՝ Ժիրայր Կանայանց-Հարությունյանց

Հայերեն երգարանների մատենագիտություն (1513-1921թթ.)/Աշխատասիր.  
Հ 249 Կարինե Հարոյանի, խմբ. և առաջաբանի հեղինակ՝ Թովմաս Պողոսյան.- Եր.  
Նահապետ, 2014, 652 էջ:

Գիրքը պարունակում է հայերեն երգարան-ժողովածուների, նաև երաժշտության դասագրքերի  
և երաժշտական պարբերականների մատենագիտությունը (բովանդակությունը կամ հակիրճ  
նկարագրությունը): Հավելվածը պարունակում է մեկական երգեր և եղանակներ ընդգրկող  
հրատարակությունների մատենագիտությունը:

Նախատեսվում է երաժիշտների, բանասերների, հայ երգի պատմությամբ հետաքրքրվողների  
համար:

ՀՏԴ 01:78  
ԳՄԴ 91+85.31

ISBN 978-9939-856-11-7

© Հարոյան Կ., 2014  
© «Սայաթ-Նովա» մշակութային միություն, 2014

## ԱՌԱՋԱԲԱՆ

Մեր ժողովրդի ազգային ամենամեծ հարստություններից առաջինը մեր լեզուն է և մեր կարծիքով, երկրորդը՝ հայ երգը: Հայ երգը ազգապահպան հզոր գենք է: Այն հայ մարդուն ուղեկցել է աշխատանքի մեջ, ստեղծագործելիս, պայքարի մեջ, դառնության պահերին եղել է նրա մխիթարիչը, երջանկության պահին՝ բազմապատկել նրա ուրախությունը: Հայը խոսել ու արդթել է երգելով:

Վարնջական ժամանակներում երգը երգվել ու տարածվել է բերնեբերան՝ բանավոր ճանապարհով ու փոխանցվել սերնդեսերունդ: Հետագայում երգերը գրառվել են պատմիչների կողմից: Ստեղծվել են երգարան-տաղարաններ: Հայ երգի մեծ կարեւորությունն է վկայում այն փաստը, որ հայ առաջին տպագրիչ Հակոբ Մեղապարտի հրատարակած հինգ գրքերից մեկը Տաղարանն է («Տաղարան է սայ հոգոյ եւ մարմնոյ» խոսուն խորագրով, Վենետիկ, 1513»):

1568 թվականին հայ երկրորդ տպագրիչ Աբգար Դպիր Թոխաթեցին Կ. Պոլսում տպագրել է Տաղարան, ուր զետեղված են եղել հոգևոր և աշխարհիկ բնույթի տաղեր:

17-րդ դարում 1681 թ. Վենետիկում լույս է տեսել Տաղարան, իսկ 1684 թվականին՝ «Դպրության գիրք» ժողովածուն, որը նախադեպ է հանդիսանում հետագա հրատարակությունների համար:

Տպագիր Տաղարաններում (նաև՝ Գանձարաններում) նյութերը դասավորված են ըստ եկեղեցական ավանդական տոնակարգի: Նախ զետեղված են տերունական տոներին, ապա՝ սրբերին և ազգային եկեղեցական սրբերին ու սրբություններին

նվիրված տաղերը: Տաղարաններում տեղ են գտել նաև աշխարհիկ բովանդակությամբ՝ դարնան, բնության, ուրախության եւ այլ թեմաներով ստեղծված տաղերը:

18-րդ դարում Կ. Պոլսում բազմիցս հրատարակվել են «Դպրութեան գիրք եւ Տաղարան վայելուչ եւ գեղեցիկ» խորագրով ժողովածուները: 1740 թվականից դրանք կոչվել են «Տաղարան վայելուչ եւ գեղեցիկ»՝ կառուցվածքով մնալով նույնը: «Գիրք դպրութեան» ժողովածուի «Հանդէս դպրութեան» բաժինը պարունակում է Պատարագի երգեցողության ժամանակ դարաց դասի (այստեղից էլ ժողովածուի անվանումը՝ «Դպրութեան գիրք») եւ սարկավազների երգելու համար նախատեսված մասերը: Ապա հաջորդել են Տաղարանները և Գանձարանները: 1752 թվականից սկսած Տաղարաններն ընդգրկում են միայն հոգևոր բնույթի տաղեր:

18-րդ դարում հայոց գրական – մշակութային կյանքում ընթանում էր վերանորոգության շարժումը, որը սկիզբ էր առել 17-րդ դարից: Հոգևոր երգի ու երաժշտության ոլորտը այդ շարժման կարեւոր բաղադրիչներից մեկն էր: Այդ շարժումը նախ միտված էր հայոց հոգևոր հին եւ միջնադարյան մշակույթի վերստին յուրացմանը: «Հայրենիքի, ազգի, քրիստոնեական ուղղափառ հավատքի համատեղ սերն է XVIII դարի հոգևոր երգի հիմնական նյութը» (Շ. Նազարյան, «Ողբի եւ սթափման բանաստեղծություն», էջ 102):

18-րդ դարում վերանորոգվում, զարգանում է նաև աշխարհիկ երգ-երաժշտությունը:

18-րդ դարում ստեղծվում եւ տպագրվում են հոգեւոր գործիչներ Մխիթար Սեբաստացու, Ղազար Ճահկեցու, Սիմեոն Երեւանցու, Պետրոս Ղափանցու հոգեւոր երգարան տաղարանները: Քանիցս հրատարակվում են Պաղտասար Դպրի տաղարանները: Կ. Պոլսի հայոց պատրիարք Հովհաննես Կոլոտի աշակերտների ստեղծագործություններն ամփոփող ժողովածուն լույս է տեսել երկիցս:

19-րդ դարում տպագրվում են Տաղարաններ անփոփոխ բովանդակությամբ Կ. Պոլսում, Թիֆլիսում, Երուսաղեմում: 1840 թվականից դրանք կրում են «Տաղարան Հայաստանեայց Սուրբ եկեղեցւոյ» խորագիրը:

1830 թվականին եւ 1846 թվականին հնդկահայ գաղութում լույս են տեսել «Սիրակարկալ» եւ «Նուագարան զբօսանաց» երգարանները, որոնցում ամփոփված են խրախճանքի, սիրո, հարսանիքի, պանդխտության եւ այլ երգեր:

1852 թվականը երգարանների հրատարակության պատմության մեջ նշանավորվում է երկու իրադարձությամբ: Հ. Ղ. Ալիշանը հրատարակել է «Հայոց երգք ռամկականք» խորագրով՝ հայ միջնադարյան ժողովրդական երգերի ժողովածուն (հետագայում պարզվել է, որ տեղ են գտել նաեւ հեղինակ ունեցող երգեր):

Ազգային ինքնագիտակցությունը սկսվում է ազգային ինքնաճանաչմամբ, որը սնվում է ոչ միայն գրավոր աղբյուրներից, այլ նաեւ անգիր ավանդություններից: Հ. Ղ. Ալիշանը ռամկական երգը՝ այլ անգիր ավանդությունների հետ դիտում է իբրև պայման՝ ազգի պատմությունը, հոգեբանությունը, լեզուն (իր փոփոխություններով) ուսումնասիրելու համար: Նրա

«փափագն էր», որ մեր գործիչները, հետեւելով բարեկիրթ ազգերին, ժողովեն երգեր: Ալիշանի այս մտքերը ծրագրային են դառնում հետագա մեր հրատարակիչների համար:

Նույն 1852 թվականին Մոսկվայում լույս է տեսել Սայաթ-Նովայի հայերեն խաղերը՝ զինվորական բժիշկ, բանասեր Գ. Ախվերդյանի աշխատասիրությամբ, առաջաբանով եւ բարբառագիտական ուսումնասիրությամբ:

19-րդ դարի առաջին տասնամյակում դիտվում է աշուղական հայալեզու բանաստեղծության աճ: 1855-1859 թթ. Մոսկվայում Լազարյան ճեմարանի դասատու Ռ. Հովհաննիսյանը լույս է ընծայել «Նոր Քնար Հայաստանի» մատենաշարով 7 տետրակ, որոնք իրենց մեջ ամփոփում են աշուղներ Ազբար Աղամի, Նիրանիի, Շիրինի, Սեյադի և այլոց խաղերը: Նա այդ երգերը ժողովել էր Երեւանում եւ իր նպատակն էր եղել ժողովրդի մեջ ընթերցանություն տարածելը: «Ժողովուրդը սիրեց այդ երգերը, կարդում էր նրանց, երգում էր: Նրանք իրենց թխուածքների հեղեղով ժողովրդական տարր մտցրին մեր գրականութեան մէջ, ընթերցողներին մի յայտնի տրամադրությունն ներշնչեցին: (Լեո, «Ռուսահայ գրականության պատմություն», հտ. Ա, Վենետիկ, 1904, էջ 23):

19-րդ դարում և 20-րդ դարի առաջին երկու տասնամյակներում լույս են տեսել նաեւ աշուղներ Զարկյարի, Զիվանու, Մալուլի, Խայաթի, Զամալու, Հագիրիի եւ այլոց երգեր եւ ոտանավորներ պարունակող ժողովածուները:

Երգարանները զգայուն արձագանքն են հայոց հասարակական կյանքում եւ մտքի մեջ ընթացող տեղաշարժերին:

19-րդ դարի 40-ական թվականների վերջերում ազգային-մտավորական զարթոնքը համակել էր հայության երկու հատվածներին: Զարթոնքի համար էական նշանակություն ունեցավ նոր ստեղծվող երգը: «Մենք սկսեցինք երգից: Երգն էր, որ եկավ մեզ զարթեցնելու» (Լեո, նշվ. աշխ., էջ 16): Զարթոնքի երգային դրսևորումն էր դորպատյան հայ ուսանողների՝ ինքնուրույն կամ թարգմանական (գերմաներենից, ֆրանսերենից, ռուսերենից) բանաստեղծությունների խոսքերով ստեղծված երգերը: Երգում էին ուսանողական կյանքը, սեր, գինի եւ հայրենիք: Ահա այս երգերը, նաեւ Պատկանյան տոհմի ներկայացուցիչների, այլեւ ժողովրդական, միջնադարյան, աշուղական երգեր (նաեւ բանաստեղծություններ) էր պարունակում Գամառ – Քաթիպայի «Ազգային երգարան հայոց»-ը՝ նոտային հավելվածով (1856, Ս.Պետերբուրգ): Մ. Մուրադյանը նշել է, որ երգարանը պարունակում էր նաեւ ընթերցանություն եւ արտասանություն նյութեր, եւ այդ սկզբունքը պահպանվում է հետագայում եւս լույս տեսած համարյա բոլոր երգարաններում:

Արեւմտյան Հայաստանի մտավորական կենտրոն Կ.Պոլսում ծնվում էր ազգային (իմա՛ հայրենասիրական) երգը, որի խոսքային բնագիրը հայ բանաստեղծների քերթվածներն էին և արծարծում էին հայրենիքի ու հայրենասիրության նյութը: Երգվում էին հայ երգահանների (նաեւ ոչ հայ) հորինած մեղեդիներով, կամ՝ եվրոպական եղանակներով:

1860 թվականի մայիսի 24-ին Կ. Պոլսում Ազգային ժողովի կողմից ընդունված եւ հաստատված Ազգային սահմանադրությամբ ծնունդ առան այսպես կոչված «սահ-

մանադրական» երգերը: 1861 թվականից սկիզբ առավ երգարանների, երաժշտական հանդեսների, այլեւ մեկական երգերի հրատարակությունը: Սահմանադրական, նաեւ հայ բանաստեղծների խոսքերով հորինված երգերը Կ. Պոլսում հնչում էին սահմանադրության տարեդարձերի ժամանակ, որոնք ժողովրդական տոների ու խնջույքների էին վերածվում: Ահա հիմնականում այս երգերն էին ամփոփվում Կ. Պոլսում տպագրված երգարաններում, «որոնք պիտի ողով էին հետզհետե հայ տունները» (Սիրունի Յ., «Կ. Պոլիս եւ իր դերը», հտ. 3, 1987, Անթիլիաս-Լիբանան, էջ 415):

Թատերական ներկայացումների ժամանակ հնչած երգերը հրատարակվել են նաև առանձին՝ «Երգարան թատերական» ժողովածուների մեջ:

Այս երգարաններից հիշենք Հովսեփ Գավաֆյանի տպագրած երգարանները: Ուշագրավ է առաջաբանում հրատարակչի արտահայտած այն կարծիքը, որ ապագայում ուսումնասիրողներն այս երգարանի շնորհիվ պատկերացում կկազմեն հասարակության մեջ իշխող զգացմունքների և գաղափարների մասին: Այս երգարաններից վերջինն է 1880 թվականի Ե. Տնտեսյանի հրատարակած «Նոր երգարան ազգայինը՝ «Գիրք մը որ յետոյ ամբողջ 28 տարիներ կրակի պէս պիտի այրեր շատ մը հայերու սիրտն ու կեանքը» (Վ. Եւ Պ. Զարգարյան եղբարք):

19-րդ դարում հրատարակված ուշագրավ երգարաններից է 1868 թ. Սանկտ Պետերբուրգում լույս տեսած «<...> երախտավոր Միանսարյանի սքանչելի "Քնար հայկականը" (Ավետիք Իսահակյանի բնութագրմամբ, Ավ. Իսահակյան, *Երկերի ժողովածու*, հտ. 6, 1979, Երեւան, էջ 333):

Մ. Միանսարյանցը տակավին 1862 թվականին կարեւորել է «ազգային լեզուաւասած երգերի դերը հայրենի լեզուն սովորելու, ազգայնութեան եւ հայրենասիրական ոգին արթնացնելու եւ զարգացնելու համար»:

Երգարաններ են տպագրվել նաեւ Թիֆլիսում, Նոր Նախիջեւանում:

Բեռլինի կոնգրեսից հետո (1878 թ.) վատթարանում է արեւմտահայութեան քաղաքական կացութիւնը: Սկսվում էր զուլումի շրջանը: 1880 թվականից գրահրատարակչութիւնը Կ. Պոլսում առավել խիստ գրաքննութեան է ենթարկվում: Արգելվում են ազգային երգարանները, խուզարկում են գրավաճառանոցները: Զերբակում են այն մարդկանց, ում մոտ որեւիցէ ազգային երգ էին հայտնաբերում: Արգելվում են տոները, ազգային երգեր կատարելը: 1881 թվականին Կ. Պոլսում բանտարկում են Եղիա Տնտեսյանին՝ երգարան տպագրելու համար: Վատառողջ Եղիան 1881 թ. ապրիլի 28-ին բանտում կնքում է իր մահկանացուն:

Սաստկանում էր նաեւ ցարիզմի հայահալած քաղաքականութիւնը:

1894 – 1896 թթ. հայկական կոտորածների ժամանակ Կ. Պոլսից գաղթում են նաեւ հայ մտավորականները, նախ՝ Բուլղարիա, հետագայում նաեւ՝ Եվրոպա: Եւ ահա Բուլղարիայի Վառնա քաղաքում 1897 թվականին լույս են տեսել երգարաններ: Երգարաններ հրատարակվել են նաեւ այլ գաղթօջախներում (Միացյալ Նահանգներ, Մեծ Բրիտանիա):

1880-ական թվականներից ծավալվում է հայ ազգային-ազատագրական շարժումը, որն ուղղված էր թուրքական բռնապետութեան դեմ: Շարժման նպատակն էր

արեւմտահայութեան ազատագրումը: Սկիզբ են առնում «հեղափոխական» երգերը: «Յեղափոխականը պէտք ունի <...> ո՛չ միայն ծրագրի, այլեւ երգի» (Մ. Տամատյան): 1880-ական թվականների կեսերին ձեւավորվում են հայդուկային խմբեր, հյուսվում են երգեր (Ավ. Իսահակյան, աշուղներ Զիվանի, Շերամ, Փահրատ, Աշխուշթ, նաեւ անհայտ), որոնց մի մասը փառաբանում է հայդուկներին, նրանց գործած սխրանքները, մյուս մասը նվիրված է առանձին արշավանքների նկարագրութեանը: Երգեր են հյուսվում նաեւ Անդրկովկասում հայ-թուրքական (1905-1906թթ.) ընդհարումների առթիվ:

Ահա այս երգերն են ամփոփված (ի շարս այլ երգերի) 20-րդ դարում հրատարակված շատ երգարաններում: Որոշ երգարաններ կրում էին երգարանի համար արտառոց թվացող խորագրեր՝ Արյան ձայներ (1906-1912 թթ. Թիֆլիսում հրատարակվել է 5 անգամ), Արյունի երգը (1907, Երևան), Վիրավոր բլբուլ (1907 թ., Թիֆլիս): Երգարաններում տեղ են գտել նաեւ այնպիսի երգեր, որ ժամանակին հավանութեան չեն արժանացել՝ թե՛ իմաստի, և թե՛ գեղագիտական առումներով: «Արյան ձայներ»-ի հրատարակչի գիտարկմամբ (1906 թ.) «Վերջին տարիներում հայկական կեանքը թե՛ թուրքիայում և թե՛ Ռուսաստանում անվերջ արիւնահեղութեան եւ ավերածութեան առարկա է դարձել, ուստի եւ հայ ժողովրդական վերջին երգերն էլ շարունակ "արիւնոտ" ձայներ են հնչեցնում, միեւնոյն ժամանակ՝ գովելով ու փառաբանելով յեղափոխական հերոսներին»: Տեղին է հիշել Հովհաննես Թումանյանին՝ «Դառնացրել են մեր հոգին, նրա մեջ զարգացրել են վրեժի ու

թշնամուտի վերաբերյալ զգացմունքները, ստիպել են երգել «Արյան երգեր» (Հովհ. Թումանյան, *ԵԼԺ*, հտ. 7, էջ 171):

«Կային եւ Ֆիդայական սիրված երգեր, որոնք խորհրդային կարգերի պայմաններում ազգամուտական հայտարարվեցին եւ արգելվեցին, սակայն մնացին ժողովրդի հիշողության մեջ եւ պատեհ առիթը նրանց նորից կյանքի կոչեց» (Մ. Հարությունյան, Ա. Բարսամյան, Հայ երաժշտության պատմություն, Երևան, 1996 թ., էջ 105): Հարկ է ասել, որ երգարանների զգալի մասը գրադարաններում պահվում էին հատուկ տիպի գրականության պահպանման բաժիններում եւ մատչելի չէին շատ ընթերցողներին:

Ի դեպ, հայ ազգային – ազատագրական պայքարի հերոսների հիշատակին նաեւ երգարաններ են ձոնվել՝ «Վազգէն-երգարան» (1901 թ., բոստոն), «Հայրենիք» (1908 թ. Բոստոն), «Ծաղկեփունջ» (1907 թ. Թիֆլիս), «Ըմբոստ երգեր» (1915 թ., Բոստոն): Երգարան է ձոնվել նաեւ հայ կամավորներին՝ «Արշալույսի ձայներ» (1915 թ., Թիֆլիս):

20-րդ դարում լույս տեսած երգարաններից հիշատակելի է «Հայրենիք» երգարանը, որի հրատարակիչները հետապնդում էին նաեւ կրթադաստիարակչական նպատակ, ուստի ջանացել են ընդգրկել կենսունակ եւ գեղարվեստական բարձրարժեք նյութեր՝ թե՛ երգեր, թե՛ արտասանության նյութեր:

1908 թվականի հունիսի 10-ին Թուրքիայում սահմանադրություն հռչակվեց, տապալվեց Կարմիր սուլթանը: «Հայերը պատրանքը ունեցան թէ փշրուած էին զիրենք ճնշող ու կաշկանդող շղթաները» (Ա. Ալպոյաճեան, «Պատմութիւն հայ Կեսա-

*րիոյ*» հտ. Ա. Գահիրէ, 1937թ., էջ 1269): Հայերը մեծապես ոգեւորված ու խանդավառված էին սահմանադրության հռչակմամբ եւ ազատության ձեռք բերմամբ: «Բուռն զարթոնք ապրեց հատկապես Կ.Պոլսի հայ մշակութային կյանքը: <...> բացվեցին մարդկանց շրթունքները: Երգում էր ամբողջ ժողովուրդը՝ հայ, թուրք <...>, երգում առանձին, երգում միասին: <...> Ակնթարթային արագությունով ժողովրդի մեջ նորից տարածվեցին Ալիշանի, Պեշիկթաշլյանի, Ռուսինյանի, Նալբանդյանի եւ ուրիշների 28 տարի արգելված հայրենասիրական երգերը: Սահմանադրության հենց առաջին ամիսներից հրապարակը ողողվեց նաեւ հայ քաղաքական կուսակցությունների սխրանքները գովաբանող երգերով» (Գ. Ստեփանյան, «Ուրվագիծ արեւմտահայ թատրոնի պատմության», հտ. 3, Երևան 1975, էջ 20-21): Այս եւ այլ երգերի արագ տարածմանը մեծապես նպաստել են Կ. Պոլսում նոր լույս տեսնող երգարանները, մեկական երգերի հրատարակությունները, նաեւ երաժշտական պարբերականները: Կ. Պոլսից բացի երգարաններ են լույս տեսել նաեւ Մարզվանում:

Գիտական հրատարակություններ են բանասեր Կ. Կոստանյանցի հրատարակած «Նոր ժողովածու»-ները (1892-1904 թթ. չորս պրակով):

Արժեքավոր հրատարակություններ են Ար. Սեդրակյանցի «Քնար մշեցուց եւ վանեցուցը» (1874 թ. Վաղարշապատ), Տեվկանցի «Հայերգը» (1882 թ., Թիֆլիս), բանահավաք Ա. Բրուտյանի «Ռամկական մրմունջները» (1895-1904թթ.):

19-րդ դարում եւ 20-րդ դարասկզբում տպագրվել են հայերենատառ թուրքերենով



երգերի ժողովածուներ (Թե՛ հոգեւոր, Թե՛ աշխարհիկ բնույթի երգեր):

Բողոքականութիւնը հայերի մեջ տարածվելուն զուգընթաց տարածվում էին նաեւ երգերը, որոնց խոսքերի մեծ մասը անգլո-սաքսոնական հոգեւոր բանաստեղծութիւնների թարգմանութիւններ էին: Կ. Պոլսում տպագրվում էին հայ ավետարանական եկեղեցու երգերը՝ թե միայն խոսքերով, թե նաեւ մեղեդիներով:

19-րդ դարի 60-ական թվականներից տպագրված երգարանների մի մասը պարունակում է թե՛ երգերի խոսքեր և թե՛

ձայնանիշեր: Այս շարքում առանձնանում են Կոմիտաս Վարդապետի «Հայ քնար» (1907, Փարիզ), «Հայ գեղջուկ երգեր» (1912, Լայպցիգ) խորագրերը կրող երգարանները:

Մեծ եղեռնից տարիներ անց Կ. Պոլսի հայոց մշակութային կյանքը նորից զարթոնք ապրեց: 1918-1921 թթ. հրատարակվել են երգարաններ (նշելի է «Կիլիկիա» երգարանը): Այս տարիներին երգարաններ են լույս տեսել նաեւ Միացյալ Նահանգների հայ գաղթօջախներում:

**ԹՈՎՄԱՍ ՊՈՂՈՍՅԱՆ**

## ԿԱԶՄՈՂԻ ԿՈՂՄԻՑ

Հայ ժողովրդի պատմական զարգացման քառուղիներում երգարաններն ունեցել են կարևոր դեր և նշանակություն՝ ժողովրդի պատմական երթը, հոգևոր մշակույթը ապագա սերունդներին տեսանելի և հասանելի դարձնելու առումով, ահա ինչու նրանց ուսումնասիրությունը բխում է ազգային շահերից: Նպատակ ունենալով ստեղծել երգարանների մատենագիտությունը՝ կատարել ենք հետևյալ աշխատանքը.

1. Կարևորել ենք մատենագիտության կառուցվածքը՝ թելադրված բովանդակությամբ և մատենագիտության առանձնահատկություններով: Կառուցվածքային տեսանկյունից այն բաղկացած է առաջաբանից, կազմողի խոսքից, համառոտագրությունների և հապավումների ցանկերից, տասը բաժիններից՝ ենթաբաժիններով հանդերձ, հավելվածից:

Բաժինները տարանջատվել են՝ համապատասխան ընդգրկված նյութերի բովանդակային ընդհանրություններին՝

Ա. Երգերի միայն խոսքեր պարունակող ժողովածուներ.

Բ. Երգերի խոսքեր և ձայնանիշեր պարունակող ժողովածուներ.

Գ. Երգերի միայն ձայնանիշեր պարունակող ժողովածուներ.

Դ. Ոչ միայն երգերի խոսքեր, այլև ոտանավորներ, արձակ էջեր, ուսումնասիրություններ, առածներ, հանելուկներ, հեղինակների հակիրճ կենսագրականներ պարունակող ժողովածուներ.

Ե. Երգարան և այլ նյութեր պարունակող ժողովածուներ.

Զ. Տարեթվերը չնշված ժողովածուներ.

Է. Թերի իրազեկանքով ժողովածուների վերնագրեր (վերնագրերը նկարագրել ենք՝ ըստ այլ մատենագիտական աղբյուրներից և պարբերական հրատարակություններից քաղված իրազեկանքի):

Ը. Երգարանների վերնագրեր, որոնց հրատարակության մասին եղել են միայն հայտարարություններ (իրազեկանքը քաղվել է մատենացանկ ունեցող հրատարակությունից և պարբերական հրատարակություններից):

Թ. Երաժշտության դասագրքեր (Երգերի թե՛ մեղեդի, թե՛ խոսք պարունակող ժողովածուներ):

Ժ. Երաժշտական պարբերականներ (Երգերի թե՛ մեղեդի, թե՛ խոսք պարունակող ժողովածուներ):

Մատենագիտության կառուցվածքի մեջ առանձնանում է «Հավելված» բաժինը, ուր ընդգրկված են՝

ա. Մեկական երգեր պարունակող հրատարակություններ (թե՛ ձայնանիշեր, թե՛ խոսքեր):

բ. Մեկական երգեր պարունակող հրատարակություններ (սոսկ ձայնանիշեր):

2. Ուշադրություն ենք դարձրել մատենագիտական աղբյուրներին՝ որպես հավաստի տեղեկություններ պարունակող նյութերի՝ քաղելով համապատասխան իրազեկանք: Օգտվել ենք՝

ա. Ընդհանուր հայագիտական, երաժշտագիտական, անհատական մատենագիտություններից.

բ. ԺԹ-ի դարերում հրատարակված հրատարակչական, կրթական հաստատությունների և հասարակական կազմակերպությունների գրադարանների, գրավաճա-

ուների գրացուցակներից: Նշենք, սակայն, որ գրավաճառների և հրատարակչական հաստատությունների գրացուցակների տեղեկություններից օգտվել ենք վերապահումով, քանզի իրազեկանքը կարող էր ճշգրիտ չլինել և միայն մասնակի տեղեկություն տար տվյալ հրատարակության խորագրի, հրատարակման տարեթվի և տպագրավայրի մասին.

գ. Ներգրքային մատենագիտություններից.

դ. Մատենացանկ պարունակող հրատարակություններից (Նման տեղեկությունները կարող էին գետեղված լինել գրքի, մեկական երգ պարունակող հրատարակությունների կողքի էջերում).

ե. Հայերեն պարբերական մամուլի համահավաք ցուցակներից և վերլուծական մատենագիտություններից.

զ. Պարբերական հրատարակությունների արձանագրական մատենագիտություններից և հակիրճ գրացանկերից (Ուշադրությունը կենտրոնացրել ենք 1860-1922 թթ. միջակայքում հրատարակված գրքերին, նոր հրատարակությունների, հրատարակչական ծանուցումների ու վաճառքի ազդերին).

է. Մատենագիտության Ա-Ձ, Թ-Ժ բաժինների և հավելվածի կազմման համար օգտվել ենք Երևանի մեծ գրադարանների քարտային գրացուցակներից, Բոննի համալսարանի (Գերմանիայի Դաշնային Հանրապետություն) էլեկտրոնային գրադարանից (Goussen).

3. Համախմբելով հավաքված գրականությունը՝ կատարել ենք վերլուծական-համադրական աշխատանք՝ ճշտելով գրքերի խորագրերը, հրատարակման տարեթվերը:

4. Յուրաքանչյուր բաժնի ենթաբաժիններում մատենագիտական նյութերը դասավորել ենք ժամանակագրական-այբբենական կարգով: Նկարագրվող հրատարակություններն ունեն միասնական (ընդհանուր) համարակալում:

5. Բաժիններում ընդգրկված հրատարակությունների բովանդակության նկարագրությունները կատարել ենք մեկ միասնական սկզբունքով՝ ներառելով հետևյալ տարրերը՝

ա. Համառոտ նկարագրություն: Անվանաթերթ: Հնատիպ հրատարակությունների պարագայում նշվել է մատենագիտության պատմության մեջ ընդունված հակիրճ ձևը, ապա՝ անվանաթերթի տվյալները: Ձայնանիշային հրատարակությունների (մեկական երգ պարունակող) անվանաթերթի բացակայության դեպքում նշվել են թղթակազմի, կողքի առաջին էջի կամ սկզբնաէջի տվյալները: Անվանաթերթ չլինելու (կամ ընկած լինելու) դեպքում նշվել է այն աղբյուրը, որից քաղվել են տվյալները: Եթե անվանաթերթի խորագիրը տարբերվել է թղթակազմի խորագրից, ապա բերվել է նաև թղթակազմի խորագիրը: Անվանաթերթի երկու խորագրի առկայության պարագայում ծանոթագրվել է երկրորդ խորագիրն ընտրելու պատճառը: Եթե հրատարակության տարեթիվը տարբերվել է անվանաթերթի վրա նշված տարեթվից, բերվել է նաև հրատարակության տարեթիվն ըստ թղթակազմի: Նշվել է գրաքննչական թույլտվության քաղաքը, ամիսը, տարեթիվը, գրաքննիչի անունը: Եթե տարեթիվը ճշտված չէ, այն նշվել է՝ ըստ հեղինակային իրավունքի (COP) նշանի, կամ ըստ պարբերականների: Նշել ենք հրատարակության վիճատիպ լինելը, հայկական ձայնանիշե-

րով (Հ. Լիմոնճյանի ստեղծած համակարգով), կատարողական դասիչները՝ կոմիտասյան եզրերով արտահայտված լինելը:

բ. Մանրամասն նկարագրություն: Առաջաբան

գ. Ստեղծագործության հեղինակի (հայտնի կամ անանուն) անունը: Անունը կամ ծածկանունը նշվել է նույնությունամբ: Եթե տվյալ հեղինակի ինքնությունը պարզվել է այլ աղբյուրների միջոցով, անունը նշվել է ուղիղ փակագծերում []: Ընդգծվել են տվյալ հեղինակի հոգևոր և աշխարհիկ կոչումները, սեղմ իրադեպերը, հավանական հեղինակի մասին կարծիքները: Ծանոթագրել ենք, երբ իբրև հեղինակ նշված անձն այդ երգի տարածող երգիչներից է, նաև հեղինակի ստորագրության փոխարեն երեք աստղանիշ դրված լինելու փաստը:

դ. Ստեղծագործության խորագիր (եթե կա՝ ենթախորագիր): «Դարձեալ ի նոյն միտ», «Ի նոյն միտ» և նմանատիպ խորագրերի դեպքում ուղիղ փակագծերում ընդգծվել է նախորդ ստեղծագործության խորագիրը: Նշենք, որ շատ խորագրեր դրվել են հրատարակիչների կողմից: Լրացրել ենք խորագրերի մեջ բացակայող բառերը, տառերը: Համեմատել և ծանոթագրել ենք՝

- ուսումնասիրված որոշ նյութեր, որոնց խորագրերը մտացածին են

- «Սիրո տաղեր» ընդհանուր խորագրի տակ գետեղված մի շարք երգերը համեմատվել են «Հայրենիներ» ժողովածուի շարքերի համապատասխան ստեղծագործությունների հետ.

- «Պարերգեր», «Ժողովրդական երգեր» ընդհանուր խորագրերի տակ կամ խորագիր ունեցող երգերի՝ «Ժողովրդական խաղիկներ» ուսումնասիրություն-ժողովա-

ծուի ստեղծագործությունների հետ համեմատություն արդյունքում էջատակում նշել ենք քառյակների թվաքանակը.

- որոշ թատերգերից քաղված երգեր, որոնց խորագրերը նշված են եղել նախորդած երգ բառով՝ առանց հեղինակի կամ թարգմանչի անվան հիշատակումով.

- այն թատերգերը, որոնց խորագիրը նշված չէ, այլ տրված է միայն հեղինակի անունը և երգի խորագիրը.

- ժողովածուները գետեղված արձակ էջերից քաղված չափածո հատվածները, որոնց խորագրերը նշված չեն.

- վեպի կամ պատմվածքի խորագրերը.

- ժողովածուներում գետեղված այն արձակ հատվածները, ուր հիշատակված է միայն հեղինակի անունը (բացի մի դեպքից), բայց ոչ երկի խորագիրը.

- գրական երկի այն հատվածը, որը հապավումով է տրված. գեղջված մասը վերականգնվել է.

Ձայնանիշերով հրատարակված երգի պարագայում նշել ենք երգի խորագիրը, մեղեդու հեղինակ-երգահանի, ապա բանաստեղծության բնագրի հեղինակի անունը: Եթե մեղեդու հեղինակի անունը նշված է առանց ձայնանիշերի, ընդգծել ենք երգի խորագիրը, բանաստեղծության բնագրի հեղինակի, ապա երգահանի անունը: Հոգևոր երգերի խորագրերից հետո նույնությունամբ ընգծվել են սուրբգրային համապատասխան համարները.

ե. Սկզբնատող (անխորագիր ստեղծագործության, միջնադարյան երգերի, նույնանուն խորագրերի, աշուղական և այլ երգատեսակների պարագայում).

զ. Երգի խոսքի կամ մեղեդու գրառողի, փոխադրողի անուն.

է. Փոխադրողի կամ թարգմանչի անուն: Եթե հիշատակված անձի թարգմանիչ կամ փոխադրող լինելը չենք կարողացել պարզել, ապա գրառել ենք նույնությամբ՝ նշելով, որ նրան համարել ենք թարգմանիչ համապատասխան աղբյուրի համաձայն:

ը. Երգի՝ մեկ այլ եղանակով կատարվելու մասին նշում.

թ. Երգը կատարողի անուն կամ այլ նշումներ (օրինակ՝ հիշած և այլն).

ժ. Երգի ստեղծման տարեթիվ և վայր: Թեք դժով նշված է ամսաթիվը, կարգային տառաթիվը և տարեթիվը:

ժա. Բանաստեղծության արտատպության սկզբնաղբյուր (ժողովածու, պարբերական հրատարակություն): Եթե ստեղծագործությունը քաղված է հեղինակի երկերի ժողովածուից, և բացակայում է հեղինակի անունը, նշել ենք նույնությամբ՝ երբեմն հավելելով հատորի համարը և ենթախորագիրը: Եթե քաղված է այլ ժողովածուներից կամ դասագրքերից, հավելել ենք հեղինակի կամ կազմողի անունը: Որոշ դեպքերում ստուգել ենք արտատպման աղբյուրը՝ պարզելով իսկությունը:

6. Երգի հորինման հանգամանքների, պատմական որևէ անձի կամ իրադարձությունը ձևավորելու մասին ծանոթագրել ենք համապատասխան երգի բնագրի կամ աղբյուրի: Ձոնագրերը մեջբերել ենք ամբողջությամբ կամ մասամբ: Կից երգերը նկարագրել ենք առանձին: Եթե ստեղծագործության տվյալ հատվածը կենցաղավարել է իբրև ինքուրույն միավոր (մեծ մասամբ տաղ-հատված, գանձ-հատված), էջատակում նշվել է այդ երկի խորագիրը, գանձի ո՛ր տողերից, ո՛ր տարընթերցվածնե-

րից բաղկացած լինելը: Ծանոթագրել ենք, երբ նկատել ենք երգի տների կամ տողերի հերթագայությունը խախտում, սկզբնաբառի զեղչում, երբ «աշխարհ» բառը փոխարինվել է իր գաղափարագրով, հանդիպել ենք ոտանավորների աղճատված օրինակների, երգերի, տաղերի համեմատության արդյունքում առկա տարբերությունների:

7. Բովանդակությունը նկարագրելիս չենք գոհացել գրքերում առկա տեղեկությունների սոսկ արձանագրմամբ, կատարել ենք վերլուծական-համադրական աշխատանք, քանզի նրանցում հաճախ չեն նշվել հեղինակների, փոխադրողների և թարգմանիչների անունները, առկա են եղել հեղինակային վերագրումներ: Հեղինակների և ստեղծագործությունների մասին լրացուցիչ տեղեկություններ հավաքագրելու նպատակով ուսումնասիրել ենք բազմաբնույթ գրականություն՝ բանասիրական և բնագրագիտական ճշտումներով: Ստեղծագործությունները որոնել ենք ոչ միայն տվյալ հեղինակի գրական ժառանգության, այլև այլ ժողովածուների մեջ: Նշենք, որ որոշ դեպքերում սկզբնաղբյուրը այդպես էլ չի բացահայտվել՝ տվյալ նյութի բացակայության պատճառով: Օգտվել ենք՝

- նկարագրվող գրքի ցանկերից, հեղինակի երկերի ժողովածուներից, գրական ժողովածուներից, բանասիրական (նաև գրականագիտական), երաժշտագիտական, թատերագիտական և այլ ուսումնասիրություններից.

- հանրագիտարաններից, Հայոց անձնանունների (Հ. Աճառյան), Կենսագրական (Գ. Ստեփանյան), Հայոց ծածկանունների (Բ. Հովակիմյան) բառարաններից.

-«Հայոց ազգագրություն և բանահյուսություն» ժողովածուներից.

- Ձեռագրացուցակներից.

- Հայերեն պարբերական մամուլի վերլուծական մատենագիտություններից:

- Պարբերական հրատարակություններից.

Այս դեպքում նշվել է պարբերականի անունը, տարեթիվը, համարը, հարկ եղած դեպքում՝ հրատարակման կարգային տարին, ամսաթիվը, թեք գծով ամսի կարգային տառաթիվը, էջերը: Ամսագրի պարագայում նշվել է առաջին էջի դարձերեսը (ա/2) կամ երկրորդ էջը ու դարձերեսը /բ/1, բ/2):

- Գամառ-Քաթիպայի «Ազգային երգարան հայոց» ժողովածուի (1856, ՍՊԲ) ձեռագիր օրինակից (Երևան, ԳԱԹ, Ռափայել Պատկանյանի ֆոնդ, Հ. 157ա):

8. Ժողովածուների էջատակերում և «Ծանոթություններ» բաժնում գետեղված ծանոթագրությունների սեղմ բովանդակությունը արտացոլել ենք մատենագիտության էջատակերում: Շտկել ենք նաև տպագրական վրիպակները:

9. Իրազեկանք ենք քաղել ոչ միայն նկարագրվող, այլև օգտագործված գրքերի նախաբաններից, ցանկերից (ներառյալ մատենացանկերը, գրքերի վերջում տպագրված բաժանորդների ցանկերը):

Նույնանուն գրքերի նկարագրության համար կիրառել ենք ներքին հղման եղանակը՝ իբրև հիմք ընդունելով առավել ամբողջական հրատարակությունը: Մյուս հրատարակությունները նկարագրելիս նշել ենք միայն այն տարբերությունները, որոնք առկա են եղել հիմք ծառայած հրատարակության հետ համեմատության արդյունքում (հեղինակի անուն, ստեղծագործության խորագիր, երգի եղանակ):

10. Գրառել ենք ժողովածուն կամ մեկական երգ պարունակող հրատարա-

կությունը ձևավորած նկարչի անունը, կազմել ենք գրքերում գետեղված գեղանկարչական, լուսանկարչական դիմանկարների, խմբանկարների, գեղանկարների ցանկը:

11. Գրառել ենք նկարագրված հրատարակությունների մասին տպագրված գրախոսությունների (մատենախոսությունների) և գրածանոթությունների ցանկը համապատասխան մատենագիտական աղբյուրների՝ մի դեպքում ճշտելով գրախոսվող հրատարակության խորագիրը (անճշտությունը պարբերականի անփութությունների արդյունքն էր):

12. Երկլեզվյա, եռլեզվյա հրատարակությունների պարագայում նախ նկարագրել եք հայերեն, ապա օտար լեզուներով հատվածները:

Նշել ենք այն հրատարակությունները, որ գտել ենք կազմված «Քնար հայկական» երաժշտական հանդեսում: Ընդգծել ենք ժողովածուների էջակալման, նյութերի համարակալման սխալները:

13. Գրառել ենք ընծայագրերը՝ նշելով տվյալ օրինակի հասցեն, ո՛ր գրադարանում լինելը: Հ. Թումանյանին ընծայած օրինակների մասին իրազեկանքը քաղել ենք «Հովհաննես Թումանյանի անձնական գրադարանը Երևանում» մատենագիտությունից: Ընդգծել ենք անձնական գրադարաններին և կրթական հաստատություններին պատկանած օրինակները, նաև նախկին պատկանելությունը մատնանշող գրքատիրոջ ստորագրությունը կամ դրոշմակնիքը:

Մատենագիտության կազմման աշխատանքներին օժանդակել են խմբագիր Թովմաս Պողոսյանը, խորհրդատու Ժիրայր Կանայանց-Հարությունյանցը, պատմաբան,

բանասեր Գևորգ Տեր-Վարդանյանը, որոնց հայտնում ենք մեր անսահման երախտագիտությունը:

Շնորհակալություն ենք հայտնում Սբ. Մեսրոպ Մաշտոցի անվան մատենադարանի, Հայաստանի ազգային գրադարանի, ՀՀ ԳԱԱ Հիմնական գիտական գրադարանի, Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի, Երևանի պետական համալսարանի, «Գարեգին Ա» աստվածաբանական հայագիտական կենտրոնի (այժմ՝ «Վաչե և Թամար Մանուկյան» մատենադարան), Հայաստանի պատմության պետական թանգարանի ղեկավարներին և աշխատողներին:

Ձեռք հավակնում կարծելու, թե մատենագիտությունը զերծ է թերություններից և բացթողումներից: Կարծում ենք, որ այս աշխատությամբ մեր համեստ նպաստն ենք բերում հայ գրքի պատմության և հայ երգի հետազոտության համալսարանական գործին:

**ԿԱՐԻՆԵ ՀԱՐՈՅԱՆ**

**ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇՈՒՄՆԵՐ, ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

**1. Գրքեր, նոտային հրատարակութիւններ, առանձնատիպեր, հոդվածներ**

Արեղեան Արտ., *ՔՊԳ - Արեղեան Արտաշէս, Քերովբէ Պատկանեան Գորպատով*, Վիեննա, Մխիթ. տպ., 1948 (Ազգ. մատ., ԾԿԱ)

Արեղեան Մ., *Երկեր*, հտ. Գ - Արեղեան Մանուկ, *Երկեր*, հտ. Դ, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1970

Արովյան Խ., *ՎՀ - Արովյան Խաչատուր, Վերք Հայաստանի. Ողբ հայրենասիրի [առաջաբան՝ Ավ. Իսահակյան, վերջաբան՝ Պ. Հակոբյան, Նկ. Գ. Խանջյանի]*, Երևան, Սովետ. գրող, 1984

«Ազատ» Մ., 1912 - Ազատութեան մատենադարան գրացուցակ, Կ.Պոլիս, 1912

Աթայան Ռ., «*Կոմիտասի ստեղծագործական ժառանգության*» - ՊԲՀ, 1969, հմր 4 - Աթայան Ռ., «*Կոմիտասի ստեղծագործական ժառանգության մի քանի հարցեր*» - Պատմա-Բանասիրական հանդես, 1969, հմր 4, էջ 15-29

Ալամդարեանց Յ., *Չափաք.* - Ալամդարեանց Յարութին, Յարութին վարդապետի Ալամդարեանց *Չափաբերականք [Հրատ. Քերովբէ Պատկանեանց]* ՍՊԲ, տպ. Ա.Ա. Կրանսկու, 1884

Ալիշան Ղ., *Նուագք* - Ալիշան Ղեւոնդ, *Նուագք Հ. Ղեւոնդեայ Մ. Ալիշանեան Մխիթարեան վարդապետի, [հ.] Գ. Հայրունի, 2-րդ տպագր.*, Վենետիկի ի Սուրբ Ղազար, ՌԶԺԷ - 1867

Ախվերդյան Գ., *Նամակներ* - Ախվերդյան Գեորգ, *Նամակներ, [Տեքստը պատրաստեց եւ ծանոթագրեց՝ Արփիկ Ավետիսյան]*, Եր., ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1964

Ակինեան Ն., ԲԳ - Ակինեան Հ. Ներսէս վ., *Բաղեշի դարոցը 1500-1704. նպաստ մը հաշոց եկեղեցու պատմութեան եւ մատենագրութեան*, Վիեննա, Մխիթ. տպ. 1952, (Ազգ. մատ., ԾՀԲ)

Ակինեան Ն., ԳԱԿԱ - Ակինեան Հ. Ներսէս վ., *Գրիգորիս Ա. կաթողիկոս Աղթամարի. Կեանքն եւ քերթուածները*, Վիեննա, 1958, (Ազգ. մատ., ԾՁ)

Ակինեան Հ., Ե2Բ - Ակինեան Հ. Ներսէս վ. - *Երեսիա Չէլէպի Քէօմիւրճեան. Կեանքն եւ գրական գործունէութիւնը. մատենագրական ուսումնասիրութիւն*, Վիեննա, տպ. Մխիթ. 1933 (Ազգ. մատ., ԾԼԵ)

Ակինեան Ն., ՋԵԳ - Ակինեան Բ. Ներսէս վ., *Ջաքարիա եպիսկոպոս Գնունեաց եւ իւր տաղերը*, Վիեննա, 1910, (Ազգ. մատ., ԾԹ)

Ակինեան, ՏՏ - Ակինեան Բ. Ներսէս վ., *Տաղասացներ եւ տաղեր*, Վիեննա, 1968, (Ազգ. մատ., ՄԵ)

Ակնարկ հայ երաժշտութեան - *Ակնարկ հայ երաժշտութեան պատմութեան*, Եր., ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1963, (Ակնարկներ հայ արվեստի պատմության, 1)

Աճառյան Հր., ՀԱԲ, հտ. Բ, Գ, Դ - Աճառյան Հրաչյա, *Հայոց անձնանունների բառարան*, հտ. Բ, Գ, Դ.- Եր., Պետ. համալսարանի հրատ., 1944, 1946, 1948

Ահարոնեան Ա., ԺԵ, հտ. 5, 8 - Ահարոնեան Աւետիս, *Ժողովածու երկերի*, հտ. 5, 8, Բոստոն, 1948, 1949 (Վերահրատարակեց «Արմէն» հրատարակչական մարմին, Թեհրան, տպ. Ֆարաբի, 1983)

Աղաբէկեան Մ., ԳՍ, - Աղաբէկեան Մարկոս, *Գարեգին Սրուանձտեանց. Ազգային ողբերգութիւն*, Գ տպագր., Կ. Պոլիս, 1911

Աղայան Ղ. ԵԺ, հտ. 1, 2 - Աղայան Ղազարոս, *Երկերի ժողովածու*, հտ. 1, 2, Եր. «Հայաստան» հրատ, 1973

Աղայեանց Ղ., ՍՀ - Աղայեանց Ղազարոս, *Սրինգ հովուական. Երգեր, ոտանավորներ եւ առակներ ընթերցասէր մանուկների համար*, Թիֆլիս, տպ. Մ. Վարդանեանց, 1882

Ալվազեան Ա., ԸՀԿ - Ալվազեան Արրահամ, *Ըար հայ կենսագրութեանց, Հտ. 3.*, Կ. Պոլիս, տպագր. Գ. Պաղտատեան, 1893

Աշըղ Ղարիպի հեքէաթը - Աշըղ Ղարիպի հեքէաթը հանդերձ երգերով, փոխ. տանկ-ից, Աշխատասիրեց Աշըղ Զիւանին 8-րդ տպագր. Հրատ. Կենտրոնական գրավաճառանոցի, Թիֆլիս, Էլեքտր. տպ. «Էպոխա», 1914

Այտրեան Գրս., «Անհրաժեշտ գիտելիք», «Բազմ.», 1919, հմր Ժ - Այտրեան Հ. Գրս., «Անհրաժեշտ գիտելիք «Բամ փորոտան»-ի վրայ», «Բազմ.», 1919, հմր Ժ, էջ 313-8

«ԱՆ - մտնգտ.» - «Անահիտ»-ի մատենագիտութիւն, *Կազմեց Անդրանիկ Զեյթունեան*, Անթիլիաս-Վիբանան, 1998, (Հայ պարբերական մամուլի մատենագիտութեան մատենաշար, Ա)

Անասեան Յ., ՄԵ - Անասեան Յակոբ, *Մանր երկեր*, Լոս Անջելես, Հրատ. Ամերիկահայ միջազգային կոլեջի, 1987

Անասյան Հ., ՀՄ, հտ. Ա, Բ, Գ - Անասյան Հակոբ, *Հայկական մատենագիտություն, Ե-ԺԸ դդ. Հտ. Ա, Բ, Գ,*



Եր., ՀՍՍՌ ԳԱ հրատարակչ., (Զանգակ-97), 1959, 1976, 2004

**Ա շ ճ ե ա ն գ ր ա տ ու ն , Կ. Պոլիս**

**Ա շ ճ ե ա ն 1897 - Ը ն դ ար ձ ա կ գ ր ա ց ու ց ա կ ,** տպագր. Սարըեան, 1897

**Ա շ ճ ե ա ն 1902 - Ը ն դ ար ձ ա կ գ ր ա ց ու ց ա կ ,** 1902

**Ա շ ճ ե ա ն 1910 - Գ ր ա ց ու ց ա կ 1902-է ն մ ի ն չ եւ 1910** հրատարակուած նոր գիրքերու [Կ. Պոլիս, 1910]

**Ա շ ճ ե ա ն 1922 - Ը ն դ ար ձ ա կ գ ր ա ց ու ց ա կ ,** Կ. Պոլիս, տպագր. Մ.Տէր-Սահակեան, 1922

**Առաքել Բաղիշեցի, ՈՒՔԲ - Առաքել Բաղիշեցի, Ուսումնասիրություն, քննական բնագրեր եւ ծանոթագրություններ Արշալույս Ղազինյանի,** Երեւան /ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1971

**Ասատրեան Ա., «Էջեր հայ-իտալական...» - Ասատրեան Աննա, Էջեր հայ-իտալական երաժշտական առնչությունների պատմությունից -** «Բազմ.», 2005, էջ 45-54

**Ավետիսյան Ա., ԳԱ - Ավետիսյան Արփիկ, Գեորգ Ախվերդյան,** Երեւան, Հայպետհրատ, 1963

**Ավետիք Իսահակյան, ԿՄՅ - Ավետիք Իսահակյան (1875-1957). Կենսամատենագիտական ցանկ [խմբ.՝ Ա. Ինճիկյանի, Տ. Կարապետյանի],** Եր., 1976

**ԱԻԵՄ - Ավետիք Իսահակյանը երաժշտության մեջ. Տեղեկատու [կազմ.՝ Գ. Թաշչյան, խմբ.՝ Ն. Ազարյան],** Եր., Ավ. Իսահակյանի տուն-թանգարան, Եր., 2006

**«Արեւելք» - «Արեւելք» (1855-1856) եւ «Արեւմուտք» (1859, 1864-1865) հանդեսների անոտացված մատենագիտություն, [կազմ.՝ Մ. Ն. Հակոբյան եւ Ժ. Մ. Ծերունյան],** Եր., 1980

**Արեւշատեան Ա., Անհի երաժշտական մշակոյթը - Արեւշատեան Աննա, Անհի երաժշտական մշակոյթը եւ նրա հետ կապուած Շարականագիրները -** «Բազմ.», 1995, էջ 210

**Արեւշատեան Ա. - «Գրիգոր Մագիստրոսը...» - ՀՀՀ, 2007 - Արեւշատեան Աննա, Գրիգոր Մագիստրոսը՝ շարականագիր եւ տաղասաց - ՀՀՀ, 2007, էջ 69-75**

**«ԱՎ» ամս. մտնգտ. - «Արծուի Վասպուրական» ամսագրի մատենագիտություն (1855-1856, 1858-1864թթ.), Կազմեց եւ առաջաբանը գրեց Էմմա Կոստանդյանը, խմբագիր՝ Ալբերտ Խառատյան,** Եր., 2006 (Մեարդպ արք. Աշճեան մատենաշար, 23)

**Արծիւ, 1913 - Արծիւ, ժողովրդական գրավաճառանոց. համառօտ գրացանկ:** Կ. Պոլիս, տպ. Սանճագճեան, 1913

**Արմենիա 1930 - «Արմենիա» գրատուն, Բոստոն, Ամբողջական գրացուցակ, Բոստոն, 1930**

**Բախշինեան Ա., «Մարտչէզը...» - Բախշինեան Արծուի, «Մարտչէզը եւ Հայ իրականությունը», Առանձնատիպ ՀՀՀ ԻԱ հատրէն, Պէյրոս, 2001, էջ 199-218**

**Բաղդասարեան Եղ., «Համր երգ» - Բաղդասարեան Եղիշէ, Համր երգ, Երգ եւ ոտմանս, օր.5, ՍՊԵ, [1906]**

**Բամպոբճեան Գ., 1801-1850 թուականներու... - «Բազմ.», 1991, հմր 1-2, էջ 296 - Բամպոբճեան Գեորգ, «1801-1850 թուականներու միջեւ հայերէն եւ հայաստան թուրքերէն նորայայտ տպագրութիւններ», - «Բազմ.», 1991, հմր 1-2, էջ 282-305**

**Բամպոբճեան Գ., ՅՊԵ - Բամպոբճեան Գեորգ, Յակոբ պատրիարք Նայեան (1706-1764). Կենսքը, գործերը եւ աշակերտները,** Ստամպուլ, տպ. Մուրատ Օֆսէթ, 1981 («Շողակաթ» մատենաշար, թիվ 1)

**Բամպոբճեան Գ., ՅՊԿ - Բամպոբճեան Գ., Յովհաննէս պատրիարք Կոլոտ (1678-1741) եւ իր աշակերտները,** Ստամպուլ, [տպ. Մուրատ Օֆսէթ], 1984, («Շողակաթ» մատենաշար, թիւ 2)

**Բարխուդարեանց Գ., Բանաստեղծութ. - Գեորգ Բարխուդարեանցի Բանաստեղծութիւնները, Թիֆլիս, արագատիպ տպ. Մն. Մարտիրոսեանցի, 1897**

**ԲՀՄԸԳ 1912 - Բաքուի Հայոց Մարդասիրական Ընկթիւն գրադարա. Գրացուցակ հայերէն գրքերի... Баку, Электронпечатня газеты "Баку", 1912**

**Բիւզանդացի Ն., ՀՏ - Բիւզանդացի Նորայր Ն., Հատրնտիր տաղարան հայ բանաստեղծից ի դարուն ԺԲ-ԺԸ, Հրատ. պատրաստեց Մարտիրոս Մինասեանը, Ժնն, 2002**

**Բիւզանդացի Ն.Ն., ՅՀՏ - Բիւզանդացի Նորայր Ն., Յաւելուած Հատրնտիր տաղարանիս, Հրատ. պատրաստեց Մարտիրոս Մինասեանը, Ժնն, 2002**

**Բրուտեան Ա., ՌՄ, մաս Ա.Բ - Բրուտեան Արշակ, Ռամկական մրմունջներ, մաս Ա, Կազմեց, խմբագրեց, ծանոթագրությունները եւ առաջաբանը գրեց Մ. Ա. Բրուտյանը,** Եր., «Սովետ. գրող» հրատ., 1985,

**Մաս Բ, Կազմեց, ծանոթագրությունները եւ առաջաբանը գրեց Մ. Ա. Բրուտյանը, խմբ.՝ Խ. Վ. Մարտիրոսյան եւ Թ. Գ. Պողոսյան,** Եր., «Ամբողջ գրուպ», 2002

**Գալայճեան Ա., «Յուցակ...» - Սիօն, 1967, թիւ 7-8, էջ 333, 1969, թիւ 7-8, էջ 384-5 - Գալայճեան Արայ, Յուցակ եւ յիշատակարաններ Երուսաղէմի Գ. Կիլիպէնկեան մատենադարանի հայերէն հնատիպ գիրքերու (1512-1800) - «Սիօն», 1967, թիւ 7-8, էջ 333, 1969, թիւ 7-8, էջ 384-5**

- Գալեմբեարեան Գ., ՊՀԼ - Գալեմբեարեան Գրիգորիս վ., Պատմութիւն հայ լրագրութեան ի սկզբանէ մինչեւ մեր ժամանակը, Հտ. Ա, Վիեննա, տպ. Մխիթ., 1893 (Ազգ. մատ., Թ)
- Գալեմբեարեան Գ., ՊՀԼ... - «ՀԱ», 1897, հմր 9 - Գալեմբեարեան Գրիգորիս վ., Պատմութիւն հայ լրագրութեան 1860էն մինչեւ մեր օրերը - «ՀԱ», 1897, հմր 9, էջ 270-74
- Գալֆայեան Խ., Արշակ Երկրորդ - Գալֆայեան Խորէն, Արշակ Երկրորդ, Ողբերգութիւն, Թէոդոսիա, տպ. Խալիպեան, 1861
- Գանձարան, Գ. Ա-Բ - Գանձարան երկու գրքով, Աշխատասիրութեամբ Վարդան Գեորգիեանի, խմբագիր՝ Արշակ Մադոյան, Անթիլիաս, Լիբանան, 2008, [Հրատ.] Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութիւն, Հայկական մատենաշար Գալուստ Կիլիկեանի փմնարկութեան գիրերու գիտի 1600-ամեակի մատենաշար, (Մատենագիրք Հայոց, Հտ. ԺԳ-ԺԴ)
- ԳՀՀԲ - Գանձարան հայ հին բանաստեղծութեան, Աշխատասիրութեամբ Պողոսի Խաչատրյանի [մասնակի աշխատասիրութեամբ՝ Վարդան Գեորգիեանի], Եր., 2000
- Գարտաշեան - Գարտաշեան Ա. Հ., Մատենագիտութիւն հայաստան օտար լեզուով տպագիր գիրքերու = *A bibliography of Books Published in Armenian Script. Non-Armenian languages*, Փարիզ, Հրատ. «Ռուբեն Սեալ» մշակութային փմնարկի, 1987
- Գարուն 1907, - «Գարուն» գրատուն, Յայտագիր թիւ 2, Կ. Պոլիս, տպագր. Սագաեան, 1907
- Գավաֆեան, 1890 - Գավաֆեան գրատուն, Յանկ տպագրեալ գրոց յայլ եւ այլ տեղիս հայկական հին եւ նոր մատենից., Կ. Պոլիս, 1890
- Գեոնեան Ա., Գիւլիզար - Գեոնեան Արմենուհի (Տէր-Կարապետեան), Գիւլիզար, Եր., Երեւանի պետ. համալսարանի հրատ., 1992
- Գ ք լ ք ճ ե ա ն - Յովհ. Գըլքնեան (գրավաճառ-հրատարակիչ) գրատուն, Կ. Պոլիս
- Գըլքնեան 1909 - [Գրացոցակ], 1909
- Գըլքնեան 1910 - Գրացոցակ, 1910
- Գըլքնեան 1911 - Գրացոցակ, տպագր. Նշան Պապիկեան, 1911
- Գըլքնեան 1913 - Գրացոցակ, տպ. Օ.Արզուման, 1913
- Գըլքնեան 1914 - Պատկերագրող ընդարձակ գրացոցակ, Կ. Պոլիս, տպագր. Մանուկ Յ.Գօշմեան, [1914]
- Գյոդակյան Գ., ՌՄ - Գյոդակյան Գեորգ, Ռոմանոս Մելիքյան. Կյանքը եւ ստեղծագործությունը, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1960
- Գովրիկեան Գ., «Հայ տպագրութեան...» - «ՀԱ», 1888, հմր 8, էջ 140 - Գովրիկեան Գ., «Հայ տպագրութեան նորագիտ երախայրիք» - «ՀԱ», 1888, հմր 8, էջ 138-41
- Գրիգոր Նարեկացի, ՏԳ - Գրիգոր Նարեկացի, Տաղեր եւ գանձեր, Աշխատասիր. Արմինե Քյոշկերյանի, Եր., ՀՀՍՀ ԳԱ հրատ., 1981
- Գրիգորիս Աղթամարցի, ՌԻՔԲ - Գրիգորիս Աղթամարցի, XVI դ., Ռուսմնասիրություն, քննական բնագրեր եւ ծանոթագրություններ Մայիս Ավդալբեկյանի, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1963
- Գրիգորյան Ա., «Հայ բանասիրության...» - Առողջապահություն, 1986, հմր 5, էջ 43 - Գրիգորյան Ա., «Հայ բանասիրության մեծ երախտավոր բժիշկը» - Առողջապահություն, 1986, հմր 5, էջ 42-4
- Գրիգորյան Ռ., ՀԺՕՄԵ - Գրիգորյան Ռոզա Հ., Հայ ժողովրդական օրորոցային եւ մանկական երգեր, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1970
- Գուլամիրեանց Ա., ՊՄ - Գուլամիրեանց Աբգար Ա., Պարտէզ մանկական (փոքրիկ երեխաների համար, շրջան Ա), Եր., սեպտ. տպ., 1885
- Գուտ. - 1908, 1910, 1911, 1914 - «Գուտենբերգ» գրախանութ. (գրավաճառանոց) Հայերեն գրքերի ցուցակը, Թիֆլիս, տպ. Տ.Մարկիանոս Ռոսինեանցի (1910՝ տպ. օր Ն. Աղանեանցի), 1908, 1910, 1911, 1914
- Գանիլեան Ժ., «Նոր յայտնաբերումներ...» - «Բանասիրական որոնումներ», էջ 131-38 - Գանիլեան Ժիրայր, «Նոր յայտնաբերումներ Հայաստանի առաջին տպարանի եւ առաջին հրատարակություններու մասին» - «Բանասիրական որոնումներ», Բեյրութ, «Սիփան», 1996, էջ 131-38
- Գաշտեանց Ա., «Երբ որ բացվին...» - «Գարուն», 1980, հմր 4, էջ 94 - Գաշտեանց Անահիտ, «Երբ որ բացվին դռներն հոստ...» («Կիլիկիա» երգի պատմությունը) - Գարուն, 1980, հմր 4, էջ 92-6
- Գավթյան - Գավթյան Հայկ, Հայ գիրքը 1801-1850 թվականներին. մատենագիտություն, Խմբագրութեամբ Հ. Ս. Անասյանի, Եր., 1967
- Գավթյան Հ., «Մի հին...» - «ՍԳ», 1967, հմր 1, էջ 140-1 - Գավթյան Հայկ, «Մի հին հազվագյուտ երգարան», Սովետական գրականություն, 1967, հմր 1, էջ 140-1
- Գարոնյան Ա., Մ. Նալբանդյանի գրական ստեղծագործության... - ԷՀԺՊԲ, էջ 243 - Գարոնյան Սերգեյ, Մ. Նալբանդյանի գրական ստեղծագործության մի քանի

հարցերի մասին. տե՛ս հետևյալ գրքի մեջ՝ Էջեր հայ ժողովրդի պատմության և բանասիրության [հողվածների ժողովածու], Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ. 1971, էջ 228-253

**Գաթեան - Ս. Գաթեանի կրթական-հրատարակչական գործակալություն, Լիակատար գրացուցակ (Գաթեան Ս., աշխատասիրութեամբ Մ.Ը-ի, Բ.Զ-ի և Գ.Թ-ի),** 1902-1904, Կ. Պոլիս

**Գեմիրճյան Գ., ԵԺ, հտ. XIV - Գեմիրճյան Գերենիկ, Երկերի ժողովածու, հտ. XIV,** Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1987

**Գերիկյան Վ., «Հայ գիրքը...» - Գերիկյան Վարդան, «Հայ գիրքը աշխարհի խաչմերուկներում», Մասն Ա, Վեներտիկից Հոտմ (16-րդ դար),** Եր., «Զանգակ» հրատ., 2012

**Գերիկյան Վ., «Մի հին երգի...» - ԲԵՊՀ, հմր 1, էջ 164 - Գերիկյան Վարդան, «Մի հին երգի ամբողջական բնագիրը» - ԲԵՊՀ, 1984, հմր 1, էջ 163-5**

**Գողոխյան Գ., Յերկեր - Գողոխյան Գեորգ, Յերկեր, Առաջաբանը, ծանոթագրությունները, բառարան չե խմբագրություն Իվ. Բեգլարովի, Հտ. 1,** Թբիլիսի, 1939

**Գուրչյան Պ., ԵԺ, հտ. 1-2 - Գուրչյան Պետրոս, Երկերի ժողովածու, Երկու հատորով, հտ. 1-2 [Տեքստը պատր. և ծանոթագրեց Ա. Ս. Ըարուրյանը, Խմբագիր՝ Պարույր Սևակ],** Եր., 1971-1972

**Ե ա զ ր ճ ե ա ն - Եազրճեան Ա. Պ. (գրավաճառ-հրատարակիչ) գրատուն,** Կ. Պոլիս

**Եազրճեան 1909 - Գրացուցակ,** տպագր. Յ. Մատթեոսեան, 1909

**Եազրճեան 1915 - Գրացուցակ,** տպագր. Յ. Մատթեոսեան, 1915

**Եազրճեան 1923 - Գրացուցակ (թղթակազմի՝ Ընդարձակ գրացուցակ 1923,** տպագր. Բէլթէեան, 1923, (Բովանդակությունը հար և նույն է Զարդարեան գրատան «Ընդարձակ գրացանկ»-ի (1922թ.) հետ

**Եազրճեան 1924 - Գրացուցակ (թղթակազմի՝ Ընդարձակ գրացուցակ) տպագր. Կիրեմպերկ Կ. Ն. Մագասեան և ընկ., 1924, (Բովանդակությունը հար և նույն է Զարդարեան գրատան «Ընդարձակ գրացանկ»-ի (1925թ.) հետ**

**Եազրճեան 1928 - Ընդարձակ գրացուցակ,** Կ. Պոլիս, տպ. Առետրական, 1928

**Երան, 1915 - «Երան հրատարակչություն», Պոսթըն, Երան, ա.թ. [1915?] (անվանաթերթը և թղթակազմը չեն պահպանվել: Վերնագիրը էջախորագիրն է)**

**Երեմեան Ա., Աշուղ Գրիգոր Տալեան - Երեմեան Արամ, Աշուղ Գրիգոր Տալեան (Յերամ), Նրա աշուղական**

**գործունեության 50-ամեակի առիթով,** Վեներտիկ, Ս.Ղազար, 1930

**Երեմեան Ա., «Հնդկահայ մշակույթը...» - Երեմեան Արամ, Հնդկահայ մշակույթը և ԺԹ դարի մի անհայտ ձեռագիր տաղարան (17-20-րդ դդ.) - «Բագմ.», 1965, 1-3, էջ 24-32, հմր 8-10, էջ 215-24**

**Երեմեան Ա., ՓՋՀԲ - Երեմեան Արամ, Փշրանքներ ջողահայ և հնդկահայ բանահյուսությունից (Տաղեր և ժողովրդական երգեր) 17-19-րդ դար,** Վիեննա, տպ. Մխիթ., 1930 (Ազգ. մատ., ԾԻԹ)

**Երեմեան Ս., ԳՀ - Երեմեան Սիմեոն, Գրագէտ հայեր, Ազգային դէմքեր, Ա շարք,** Վեներտիկ, տպ. Ս.Ղազար, 1913

**Երիցեան Աղ., Պատմական տեսություն... - «Փորձ», 1881, հմր 4, էջ 1-32 - Երիցեան Աղեքսանդր, Պատմական տեսություն հայ տպագրության մինչև տասնեւիններորդ դարը - «Փորձ», 1881, հմր 4, էջ 1-32**

**Երնջակյան Լ., Աշուղական սիրավեպը... - Երնջակյան Լիլիթ, Աշուղական սիրավեպը մերձավոր-արևելյան երաժշտական փոխանցությունների համատեքստում,** Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2009

**Զարդարեան Վ., Յիշատակարան, 1940 - Զարդարեան Վահան, Յիշատակարան (1512-1940), Տարեգիրք, 1941,** Գահիրէ, գրատուն Վահան Զարդարեան, 1940

**Զ ա ր դ ա ր ե ա ն - Վահան և Պիմէն Զարդարեան եղբարք (գրավաճառ-հրատարակիչներ),** Կ. Պոլիս

**Զարդարեան թի 1-4 - Գրացուցակ, 1909-1911**

**Զարդարեան թի 1 - Այժմէություններ <...>, տպագր. Օ. Արզուման, 1909**

**Զարդարեան թի 2 - Գարոցական դասագրքեր, [1909]**

**Զարդարեան թի 3 - «Հայերէն վէպեր...» [տպագր. Նշան Պապիկեան] [1910], թի 1-3-ի էջակալումն ընդհանուր է**

**Զարդարեան թի 4 - Նոր հրատարակություններ 1910-ի,** տպագր. Յ. Հօլաօ, 1911

**Զարդարեան 1922 - Ընդարձակ գրացանկ, տպագր. Յ. Փէլթէեան և Ընկ., 1922, (Բովանդակությունը հար և նույն է Եազրճեան գրատան Գրացուցակի հետ (1923թ.)**

**Զարդարեան - Պիմէն Զարդարեան գրատուն, Կ. Պոլիս Զարդարեան 1925 - Ընդարձակ գրացանկ, տպագր. Կիրեմպերկ, Կ. Ն. Մագասեան և Ընկ., 1925 (Բովանդակությունը հար և նույն է Եազրճեան գրատան Գրացուցակի (1924թ.) հետ**

**Զարդարեան 1926 - Համառոտ գրացուցակ, 1926**

**Զարպհանալեան Գ., ՀՄ - Զարպհանալեան Հ. Գարեգին, Հայկական մատենագիտություն**

=**Bibliographie arménienne: Այբուբենական ցուցակ տպագրության գիտեն մինչև առ մեզ եղած հայերէն հրատարակութեանց**, Վեներտիկ, տպ. Մխիթ., 1883

Զարպհանալեան, ՊՆՏ - Զարպհանալեան Գարեգին, **Պատմութիւն հայկական տպագրութեան սկզբնաւորութենէն մինչև առ մեզ Histoire de l'imprimerie arménienne (1513-1895)**, Վեներտիկ, տպ. Մխիթ., 1895

Զէքիեան Յ., Իտալահայ... - Զէքիեան հ. Լեոն, **Իտալահայ մեծ քննադատ Յովսէփ Աշրաֆեան (Կլաւթոն Վիսցցի)**, 1920-1980, տե՛ս հետևյալ գրքի մէջ՝ «Յատուած - 60», Փարիզ, 1986, (Մատենաշար «Յատուած», թիւ 17)

ԸԳԵ - **Ընդարձակ գրպանի երգարան. Ազգային, լեզվափոխական, սիրային, ժողովրդական եւ գեղջկական երգեր**, Boston: Mass, 1919 [Yeran Press], (Հրատ. Պէրպլէրեան գրատան, թիւ 5)

Թաղեւոսյան Ա., **Է՛-ՆՆԵՎՊ - Թաղեւոսյան Ալեքսանդր, Էջեր հայ-ռուսական երաժշտական կապերի պատմությունից (XIX դարի 2-րդ կես - XX դարի սկիզբ)**, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1977

Թաղեւոսեան Ք., **Բանաստեղծութիւնները (հեղինակի պատկերով եւ կենսագրական ակնարկով)**, Մոսկվա, տպ. Ք. Բարխուդարյանի, 1899

Թահմիզյան Ն., «Արարատն...» - «Էջմիածին», 1968, հմր ԺԱ-ԺԲ - Թահմիզյան Նիկողոս, «Արարատն» ու երգ-երաժշտության հարցերը, «Էջմիածին», 1968, հմր ԺԱ-ԺԲ, էջք 84-90

Թահմիզյան Ն., «Արարատն...» - «Էջմիածին», 1969, հմր ԺԲ - Թահմիզյան Նիկողոս, «Արարատն» ու Կոմիտաս վարդապետը, «Էջմիածին», 1969, հմր ԺԲ, էջք 60-69

Թահմիզյան Ն., «Մայր Աթոռի տպարանը...».- «Էջմիածին», 1972, հմր ԺԲ - Թահմիզյան Ն., «Մայր Աթոռի տպարանը եւ հայ երաժշտարվետը, «Էջմիածին», 1972, հմր ԺԲ, էջք 89-97

Թահմիզյան Ն., ՆԾ - Թահմիզյան Նիկողոս Կ., **Ներսէս Ընդհալին երգահան եւ երաժիշտ**, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1973

Թահմիզյան Ն., «Սայաթ-Նովայի...», «Տեղեկագիր ՀՍՍՌ ԳԱ հաս. գիտ.», 1963, հմր 10, էջ 33-58 - Թահմիզյան Նիկողոս, **Սայաթ-Նովայի հայերեն երգերի եղանակների մասին**, Տեղեկագիր ՀՍՍՌ ԳԱ հաս. գիտ., 1963, հմր 10, էջ 33-58

Թահմիզյան Ն., «Սայեաթ-Նովան...» - Թահմիզյան Նիկողոս Կ., **Սայեաթ-Նովան եւ հայ գուսանա-**

**աշուղական երգարուեստը**, Փասադենա, Դրագարկ հրատ., 1995

Թահմիզեան Ն., **S2 - Թահմիզեան Նիկողոս Կ., Տիգրան Զոխաճեան. Կեանքը եւ Ստեղծագործութիւնը**, Փասադենա, Դրագարկ հրատ., 1999

Թաղիադյան Մ., ԳԵ - Թաղիադյան Մեսրոպ, **Գեղարվեստական երկեր**, Եր., «Հայաստան» հրատ., 1965

Թաղիադեանց Մ., Եղերերգութիւն - Թաղիադեանց Մ. Գ., **Եղերերգութիւն յօրհաս Թանկայ Թաղիադեանց, [Կազմ.՝ Յովհ. քհնյ. Մկրեան]**, Թիֆլիս, տպ. Մ.Շարաձե, 1893

Թարգմանութիւնք - **Թարգմանութիւնք արձակ եւ ոտանաւոր ի ոտուսաց լեզուէ ի հայ բարբառ ի Ժուկովսկոյ, Պուշկինէ, Լերմոնտովայ, Բարատինսկոյ եւ Գեւորջէ Յ. Համազասպեանց**, Մոսկով, տպագր. Շեմ. Տեարց Լագարեանց, 1843

Թարվերդյան, ՀԳ - Թարվերդյան Գեղամ (կազմող), **Հայ գուսաններ**, Եր., Հայպետհրատ, 1957

Թեյմուրազյան Ն., Կոմիտաս - Թեյմուրազյան Նիկողայ Ա., Կոմիտաս (Սողոմոնյան Սողոմոն Գևորգի) **Բիրլիոգրաֆիա, Հավաքեց եւ կազմեց ՀՍՍՌ արվեստի վարստակավոր գործիչ Ն. Ա. Թեյմուրազյան**, Եր., 1957

Թեյմուրազյան Ն., **S2 - Թեյմուրազյան Ն. Ա., Սեմյոնովա Զ. Ա., Տիգրան Զոխաջյան. Մատենագիտություն**, Եր., 1964

Թեյմուրազյան Ն., **Քր. Կ. Մ. - Թեյմուրազյան Ն. Ա., Քրիստափոր Կարա - Մուրզա. Համառոտ բիրլիոգրաֆիա**, Եր., 1956

Թեղոյիկ, **SS - Թեղոյիկ, Տիպ ու տառ 412,-1512-1912**, Կ. Պոլիս, հրատ. Վահրամայ եւ տպագր. Հրաջէի Տէր-Ներսէսեան, ՌՅՎԱ, 1912-13

Թ Կ Գ - **Թիֆլիսի կենտրոնական գրավաճառանոց**, Թիֆլիս (Տիֆլիս) տպ. Մ.Շարաձէի, տպ. «Հերմես»

ԹԿԳ 1891 - **Հայերէն գրքերի լիակատար գրացուցակ**, 1891

ԹԿԳ 1894 - **Հայերէն գրքերի ցուցակ**, 1894

ԹԿԳ 1895 - **Հայերէն գրքերի ցուցակ**, 1895

ԹԿԳ 1898 - **Հայերէն գրքերի ցուցակ**, 1898

ԹԿԳ 1910 - **Լիակատար գրացուցակ հայերէն գրքերի**, 1910

Թումանեանց Յար., **Արտուազդ Բ - Թումանեանց Յարութիւն, Արտուազդ Բ, Պատմական Ֆէլիթա 4 պատկերով**, Թիֆլիս, 1904

Թումանեանց Յար., **Նուագներ - Թումանեանց Յարութիւն, Նուագներ**, Թիֆլիս, 1902

Թումանյան Հովհ., ԵԼԺ, հտ. 1, 2, 3 - Թումանյան Հովհաննես, *Երկերի լիակատար ժողովածու, հտ. 1, 2, 3*, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ. (Հայաստանի ԳԱ հրատ.) 1988, 1990, 1991

Թօփճեան Յ., *ՅԶԳԽՎ* - Թօփճեան Յակոբ, *Յուցակ ձեռագրաց Գաղեան Խաչիկ վարդապետի, ժողոված 1878-1898, Մասն Ա.*, Վաղարշապատ, տպ. Մայր Աթոռույ Ա.Էջմիածնի, 1898

ԺԽ - *Ժողովրդական խաղիկներ. Գյուղական փոքր յերգեր իրենց փոփոխակներով*, Խմբ. պրոֆ. դ-ր Մանուկ Աբեղյան, մասնակի աշխատակցությամբ Կոմիտասի, Հայպետհրատ, 1940

Ինճիկյան Ա., *Ծատուրյանի կյանքը* - Ինճիկյան Արամ, *Ծատուրյանի կյանքը*, Եր., Պետհրատ., 1940 (Նշանավոր մարդկանց կյանքը, գիրք 10-րդ)

Իշխանյան Ռ., *ԱԲԼՊ* - Իշխանյան Ռաֆայել, *Արևելահայ բանաստեղծության լեզվի պատմություն. 17-րդ դարից մինչև 1920թ.*, Եր., Հայպետհրատ, 1978

Իշխանյան Ռ., *ՀՄՊ*, պր. Բ - Իշխանյան Ռաֆայել, *Հայ մատենագիտության պատմություն*, պր. Բ, 1800-1920, Եր., 1968

Իսահակյան Ավ., ԵԼԺ, հտ. 1 - Իսահակյան Ավետիք, *Երկերի լիակատար ժողովածու, հտ. 1, Բանաստեղծություններ*, Եր., ՀՀ ԳԱ «Գիտություն» հրատ., 2003

Իսահակյան Ավ., *Երգեր եւ վերքեր* - Իսահակյան Ավետիք, *Երգեր եւ վերքեր*, Թիֆլիս, տպ. «Հերմես», 1908

Իսահակյան Ա., *Հայրենի աղբիւրից* - Իսահակյան Ալետիք, *Հայրենի աղբիւրից [Բանաստեղծություններ՝ թղթակազմին]*, Boston, Hairenik Press, 1920

Իսահակյան Ա., *Ավետիք Իսահակյան* - Իսահակյան Ավիկ, *Ավետիք Իսահակյան. գիտական կենսագրություն*, գ. Ա, Եր., ՀՀ ԳԱ «Գիտություն» հրատ., 2000

Իրազէկ Յ., *ՊՀՏ* - Իրազէկ Յ. (Տեր-Յակոբեան Յակոբ), *Պատմություն հնդկահայ տպագրության*, Անթիլիաս, հրատ. Կաթողիկոսության Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, 1986

Լեո, ԵԺ, հտ. 4, 5, 6 - Լեո, *Երկերի ժողովածու*, հտ. 4, 5, 6, Եր., «Հայաստան», 1985, 1986, 1987

Լեո, *Վէպ թէ պատմություն* - Լեո, «Վէպ թէ պատմություն» (*Ղարաբաղի պատմությունը Ապրես Բեկնազարեանի գրչի տակ*), Ծուշի, տպ. հայոց հոգևոր տեսչության, 1887

Լեոնյան Գ., *ՀԳՏԱ* - Լեոնյան Գարեգին, *Հայ գիրքը եւ տպագրության արվեստը. Պատմական տեսություն սկզբից մինչև XX դարը*, Եր., Հայպետհրատ, 1958, 254 էջ

Լեոնեան Գ., *ՀԱ* - Լեոնեան Գարեգին, *Հայ աշուղներ*, Ալեքսանդրապոլ, տպ. Գ.Սանդեյանցի, 1892

Լեոնյան Գ., *ՀՊՄ* - Լեոնյան Գարեգին, *Հայոց պարբերական մամուլը. Լիակատար ցուցակ հայ լրագրության սկզբից մինչև մեր օրերը (1794-1934), Առաջաբանով, Ներածությամբ, Ծանոթություններով յե Աղյուսակներով կազմեց Գարեգին Լեոնյան*, ՅԵրեւան, հրատ. Մելքոնյան ֆոնդի, 1934

Լեւոնտով Մ., *Գեւ* - Լեւոնտով Միխայիլ Իւր., *Գեւ. Արեւելեան վէպ*, Թարգմ. բնագրից Յ.Ձ. Միրզայանց, Тифлис, электропечатня Грузин. Изд. т-ва, 1901

ԼՆԵ - *Լիակատար նոր երգարան (Հրատ. Յ. Աշճեան) կամ ընդարձակ Քնար հայկական. Հայրենասիրական ազատ երգեր*, Կ. Պոլիս, տպագր. Ռ.Սագանեան

*Լուսաղբիւր, 1923* - *Լուսաղբիւր գրատուն*, Կահիրէ, Համալսոս գրացանկ, Կահիրէ, տպագր. «Յուսարթ», 1923

*Խաչատուր Կեչառեցի - Ավդալբեկյան Մ.Թ.*, *Խաչատուր Կեչառեցի XIII-XIVդդ.*, Եր., ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1956

Խրիմեան Հաչրիկ, *ԱԵ* - Խրիմեան Հաչրիկ, *Ամբողջական երկեր*, Նիւ Եորք, հրատ. Հայ Կրթական հիմնարկության, 1929

Ծատուրյան Ա., *Բանաստեղծութ.*, 1958 - Ծատուրյան Ալեքսանդր, *Բանաստեղծություններ*, Եր., Հայպետհրատ, 1958

Ծատուրեան Ա., *Բանաստեղծութ.*, 1891 - Ծատուրեան Ալեքսանդր, *Բանաստեղծություններ, Հրատ. Աթանաս Ժահմարեան*, Մոսկվա, տպ. Մկրտիչ Բարխուդարեանի, 1891

Ծատուրեան Ա., *ՌԲ* - Ծատուրյան Ալեքսանդր [թրգմ.], *Ռուս բանաստեղծներ, բանաստեղծների պատկերներով, 2-րդ գրքույկ.*, Հրատ. եղբ. Խ. եւ Գ. Ծորշորեան, Մոսկուա, տպ. Ք.Բարխուդարեանի, 1906

Մերենց, *Երկեր* - Մերենց, *Երկեր*, Եր., «Հայաստան» հրատ., 1968

Կարա - Մուրզա Քրիստափոր, *Խմբերգեր* - Կարա - Մուրզա Քրիստափոր, *Խմբերգեր, Կազմեց, խմբագրեց եւ ծանոթագրեց Ռ.Ա. Աթայանը*, Եր., «Հայաստան» հրատ., 1978

Կարապետեան Ռ., *ԼՅՀԼ* - Կարապետեան Ռաֆայել (կազմ.), *Լիակատար ցուցակ հայերէն լրագիրներու որոնք կը գտնուին Միսիթարեան մատենադարանին մէջ 1794-1921*, Վիեննա, տպ. Միսիթ., 1924

Կարենեանց Յ., *Շուշանիկ* - Կարենեանց Յակոբ, *Շուշանիկ դուստր մեծին Վարդանայ հայոց սպարապետի*, Թիֆլիս, տպ. Գ. Մելքոնյանց եւ Հ. Էնֆիանեանց, 1860

«Կիլիկիա», 1923-4 - *Կիլիկիա գրաված առանց, Լիակատար գրացուցակ 1923-4, 6-րդ տպագր.*, Կ. Պոլիս, տպ. Յ. Ասատուրեան որդիք, [1923]

